

ՀԵՅԱՍՏԱՆԻ ՍԱՀ. ԽՈՐՀԻԿԱՆԻ ՀԵՅԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈՒՐԳ ՅԵՐԱԿԱՆԻ, ՄԱԿԱՐԾ.

Քարգի. ռուս. Ա. Շ.

# ԴՐԱՄԱՏԻՉԱՑԻԱՆ

Ա. ԱԽՏԵԶԱՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ - № 72

ՅԵՐԵՎԱՆ

1923

4830

# ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

## Դասագրեթի սերիա

4. Առլիսաթյան—Գրական գոհարներ— Քրեատու-  
մատիա (728 էջ), 1922 թ. թիֆլիս . Գինը 3 ը. — կ.  
2. Լ. Նիկոնով—Բույսի կյանքը—պարզ փառձե-  
րով և 12 նկարներով, թարգմ. Ա. Տ.-Պ.  
(56 էջ), 1922 թ. Յերևան . . . . . — թ. 40 կ.  
3. Եղիշյան յիշ որիշենքը—Աշխատանքի դպրոց,  
Բ. տարի—մայրենի լեզվի դասագիրք (72  
էջ), 1922 թ. Յերևան . . . . . — թ. 60 կ.  
4. Հ. Տեր-Միրաբյան—Դեպի լույս (հասակավոր-  
ների այրբենարան), (46 էջ), 1922, Յերևան . . . . . — թ. 20 կ.  
5. Մ. Աբեղյան — Առաջնորդ հայոց լեզվի նոր  
ուղղագրության (15 էջ), 1921 թ. Յերևան . . . . . — թ. 8 կ.  
6. Ա. Վուշնյան — Խնչակն կազմել հերթարիում  
(16 էջ), 1922 թ., Յերևան . . . . . — թ. 10 կ.  
7. Տիգ. Ռաշմանյան յիշ ուրիշները — Դասընկեր,  
Ա. տարի—մայրենի լեզվի դասագիրք. յեր-  
կրորդ տարագրություն (64 էջ), 1923 թ.,  
Յերևան . . . . . — թ. 50 կ.  
8. Նորինիքի—Դասընկեր, Բ. տարի—Ա-րդ տիպ  
(152 էջ), 1920 թ., Յերևան (լրացուցիչ հրատ.) — թ. 60 կ.  
9. Նորինիքի—Դասընկեր, Գ. տարի—Տ-րդ տիպ.  
(184 էջ), 1920 թ., Յերևան (լր. տպագր.) . . . . . — թ. 70 կ.  
10. Ռ. Գարբինյան—Բնագիտական քարտեզներ,  
Ա. մաս. Անկենդան բնություն—(լրաց-  
տրական տեխնոլոգ) (16 էջ), 1922 թ.,  
Յերևան . . . . . — թ. 40 կ.  
11. Ռ. Գարբինյան—Բնագիտական քարտեզներ, Բ.  
մաս. Բույսի կյանքը՝ բացատրական տեկստով,  
(16 էջ), 1922 թ., Յերևան . . . . . — թ. 25 կ.  
12. Գ. Աշանով—Մանկական ուսուցիչ, Ա. մաս.  
տարրական դասագիրք (62 էջ), 1922 թ., Յե-  
րևան . . . . . — թ. 40 կ.  
13. Լազո—Շամա (յեղիդերեն դասագիրք), (56 էջ),  
1922 թ., Վաղարշապատ . . . . . — թ. 40 կ.  
14. Գ. Եղիշյան—Աշխատանքի դպրոց, ձեռնարկ  
(165 էջ), 1922 թ., Յերևան . . . . . — թ. 60 կ.  
15. Վ. Անմարել—Զննական յերկրաչափություն,  
թարգմ. Հ. Նավակատիկյանի (216 էջ),  
1923 թ., Յերևան . . . . . — 2 — թ. 4 կ.  
16. Ռուսական Մելիքյան—Դարբոցական յերգեր, Ա.  
մաս (46 էջ), 1923 թ., Յերևան . . . . . — 1 թ. —

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑ. ԽՈՐՀՄԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈՎԵՏՈՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՅՆ.

# ԴՐԱՄԱՏԻՉԱՑԻԱՆ

Ա. ԱՍԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Ա 23859  
44830

Թարգմ. ռուս. Ա. Շ.



ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ — Հ 72.

ՅԵՐԵՎԱՆ — 1923.

Բաւյլարված ե Պ. Պ. Լ. Ա.



## I Գրամատիկացիայի նօանակությունը

Այս ժամանակ, յերբ նկարչությունը, կաղապարումը, յերպեցողությունը, յերաժշտությունը, գրականությունը մանկամարժական մտքի և պրակտիկայի կողմից զտել և դանում են միշտ ու արժանի գնահատություն, այն ժամանակ, յերբ այդ արվեստներն ակնառու տեղ են զրավում յեթե վոչ կյանքում, դեմք մեր աշխատանքի միանական դպրոցի ծրագրում—դրամատիկական արվեստի շուրջը դեռ չի մեղմացել հին պայքարը, յերեխաների զրամատիկական ստեղծագործությունը զպրոցական աշխատավորներից տակավին չի ստացել վորեւ զնահատություն, չունի դպրոցում մայուն դիրք, իսկ յեթե մանկամարժակական մոդան մտցրել և այն դպրոցի պատերից ներս, հաճախ այդ արվեստը խեղաթյուրվել և ու ծիծաղելի ձեռք ընդուներ կարելի յե ասել, վոր արդի գործնական մանկավարժության մեջ յերեխաների դրամատիկական ստեղծագործության, մասնավորապես դպրոցական թատրոնի վերաբերմամբ գերիշխում են յերկու ժարանեղություններ:

Վամանը պահում են խիստ անբարյացակամ չեղոքություն կտմ վճռական մեղադրանքներով են հանդես գալիս դպրոցական դրամատիկական արվեստի դեմ այն դեպքում, յերբ աշակերտներին այդ արվեստում չի վերապահվում պասսիվ դիտողի, այլ զրամատիկական գործողության մեջ անձնապես մասնակցողի, զերակատարի դերը: Այս հայացքի կողմանիցները սովորաբար կրկնում են այն համաց պատճառաբանությունները, թե զըդրոցական, յերեխաների—իրենց թատրոնն ավելի վնասակար ե, քան ոդտակար, վորովնետն միքանի ընդունակներին առաջ քաշելով և անջատելով ընդհանուր մասսայից, հարկադրելով նրանց հուզմունք վերապրելու ընմի վրա, վարժեցնելով կեղծելու ուրիշների շարժուձևերը—այդպիսի թատրոնը մանուկ դերակատարների մեջ զարգացնում է կեզծություն, մնափառություն, մեծ ամտություն, նյարդայնություն և այլ անցանկալի հատկություններ:

Աւրիշներն, ընդհակառակը, միանգամայն անկատկած համարելով այն, վոր թատրոնը կազմում է գեղարվեստական դաստիարակության եյտկան ու անբաժան մասը, քիչ են մատնոց հարցին մանկավարժորեն մերձենալու, այլ դպրոցական դործնականի մեջ մեքենաբար փոխանցում են չափահանների թատրոնի արդարապետող ձեերն իրենց բոլոր մանրամաներով (ըեմ, առջեր լապտերաշաբաթ, նաևուրալիստական դեկորացիաներ, զրիմ և այլն), զարգացնելով անցանկալի թատրոնականություն և կեղծ—թատերական արտաքին՝ փոխանակ առողջ գեղարվեստական սանդագործության ու հաշակի Չափահանների արդի թատրոնին մեքենաբար նմանվելով՝ առվորաբար չափից զուրս զրավում են աշխատանքի քանակով ու վորակով. յեղակի յերեսություն ուսման տարգա ընթացքում տասնյակ նմրկայացումներ կազմակերպելն, այն ել սերտել տալով. վարժեցնելով:

Այս յերկու ծայրահեղությունները և դգուշտվոր անվատանությունը զեպի յերեխանների անհատական զրամատիկական սանդագործությունը, վորի մանկավարժական նշանակությունը հաճախ ուղղակի բացառույթը, վոր ճնշում և մանկական հետաքըրքըրությունն ու հաշակը—յերկումն ել հավասարապես հեռու յեն հշմարտությունից. Մանկական զրամատիկական սանդագործությունը, անկասկած, պետք է շատ ակնառու տեղ բռնի Միամանական Աշխատանքի դպրոցում, քայլ այն բովանդակությամբ ու մենքով, վորոնք մոռ են մանկական հոգուն և դպրոցական բարդ ու բազմազան աշխատանքի հետ դանակում են վորոշ հարաբերության մեջ:

Այս դրությունը կապ ունի խաղի նշանակության և մանկական հոգու այն առանձնահատկությունների հետ, վորոնք ամենից ավելի ցայտուն կերպով արտահայտվում են յերեխանների խաղերում:

Մանկական խաղերի նորագույն ուսումնառությունների համաձայն խաղերը հանդիսանում են ֆիզիկական, մասվոր և բարոյական դպրոց. Այդ միտքը մի փոքր պարագորասալ, սակայն ըստ եյտթյան խորապես նիշտ ձևով արտահայտում է կենդանիների և մարդու խաղերի հետախույզ կարլ Գրոսսը «Մանկության տարիներում դրյության իմաստը խաղն ե» և այնուհետև «Ենթանիները խաղում են վոչ թե այն պատճառով, վոր նրանք մանկահասակ են, այլ մանկությունը արգած ենրանց, վորոյն զի խաղանք գրվածքներում:

Խաղերի մեջ հանդես և գալիս յերեխայի կենտրոնական առանձնահատկություններից մեկն ել—ուրիշին մարմաքնելու ձգտություն ու այլակերպումը։ «Մանուկներն», ասում ե Վունդուր։ Իրենց խաղերում մեծ մասամբ մարմաքնություն չափահասներին։ աղաները պատկերացնում են զինվոր, կառապան, զյուղացի, ծովագնաց, խոհ աղջիկները՝ մայր, խոհարարուհի և այլն։ Վոչ պակաս սիրով ու հաջողությամբ յերեխան անձնավորում է կենդանիներին և նույնիսկ անշուռնչ առարկաները։ Պիեռ Լուիին, պատմում ե թրթուռ գառնալու ուշագրավ խաղի մասին, վորն այնքան շատ սիրում երին ինքն ու յուր փոքրիկ քույրը։ Խոհ Սեսլիին տարածված ձիախաղին ավելացնում ե այնպիսի հրաշալի խաղեր, վորանդ յերեխաները դառնում են մերթ շողեկառ, մերթ կառք, մերթ ծառ կամ դարպան։ «Մանկական խաղի եյությունն ե կատարել վորեն գեր և ստեղծել վորեն նոր զբությունն, —ասում ե այդ հոգեբանը։ «Ենթակայության լայն գործունեյությունը խաղերում, շարունակում ե նաև, բացատրվում ե մանուկների մեջ խորապես ամրացած ձգտումով՝ լինել վորեն բան, խաղալ վորեն զիր։ Դեր կատարելու, անձնավորման այդ մղումն այնքան խորն ե արմատացած մանկան ընության մեջ և այնքան կապված անող որդանիքմի հիմնական պահանջների հետ, վոր այդ հարցի մի ուրիշ հետախույզ՝ Ստենլի Հոլլը հնարավոր և համարում խոսել այդ ձգտման մասին՝ վորպես առանձին բնադրի—յերեխաների դրամատիկական բնադրի մասին։

Պատկերացնելով խանութպան, պոստային ցրիչ, թթուռ, կոկիվ անտեսանելի վտանգների դեմ (պատերազմ յեղինջի դեմ), քժիշկ—յերեխան հրաժարվում ի իրենից և ամբողջապես մտնում դերի մեջ։ Նա այլևս Բարսեղ չե, այլ ածխավաճառ կամ դանապան, նա Մանիս չե, այլ գթության քույր, առևտրական-կին, կարմիր Գլխարկ։

Այդպիսի խաղի ժամանակ յերեխան յելնում ե սեփական անձնավորության սահմաններից և ամբողջությամբ ապրում յուր պատկերացրած անձի մեջ։ Ահա թե վորենդ են հանդես գալիս խաղացող յերեխայի պատրանքները։ Խաղի ժամանակ վորեն դեր կատարելով, յերեխան հավատում ե, վոր ինքը պոստային ցրիչ ե, խոհարարուհի, հիմանդ, Ռորինդոն և այլն։ Յեզ յեթե խաղի սկզբում, յերբ գեռնա լիովին չի մտել դերի մեջ, նա և հավատում ե յուր նոր վիճակին և զգարճանում նրանով։ խաղի դարձացման ընթացքում, պատրանքն, այնքան և ամբողջանում, որ յերեխան տարվում է դրանով մինչև կատարյալ ինքնամուացում։

Անկատկած, այս կամ այն դերը կատարող յերեխաների-  
պատրանքը նման և դերասանի պատրանքին, վորը ըմբի վրա  
արտասանում և խսկական արցունքով կամ ուշաթափում հուզ-  
մունքից: Բայց յերեխայի և դերասանի դրամատիկ խաղերի մեջ  
կա և մոռմ և սկզբունքային խորը տարրերություն: Յերեխայի  
դրամատիկ խաղը մնում և խաղ անձնական բավականության  
համար. Նրան ուրախության և գեղարվեստական հաճույք և  
պատճառում հնաց խաղի ընթացքը, այլափոխությունը: Խաղա-  
ցող յերեխան համարյա կարիք չունի հանդիսատեսի, զոր հավա-  
նի կամ չհավանի նրա խաղը: Նա ձեր բարեհան ուշադրության-  
կարիք ունի հույնքան քիչ, վորքան կատուն, յերբ սա կատա-  
րելովես յերեակայում ու ձևում ե՝ իրեր թե մկան հետ և խա-  
ղում, ասում և Անոլին: Յերեխաների ամենահետաքրքրական  
դրամատիկ խաղերը տեղի յեն ունենում վորեն մեկուսացմա-  
անկյունում, վորտեղ վոչ մի կողմնակի աչք չի տեսնում նրանց,  
և ինչպես հաճախ դիտողների ներկայությունը միայն առեց-  
նում և յերեակայությունը ա ցրում հաճելի պատրանքը:

Ընդհակառակը, չափահան դերասանը խաղում և վոչ միայն  
յուր, այլ առավելապես ուրիշների՝ հանդիսատեսների համար:  
Դերասանի խաղի համար նկատի յե առնվում զոչ միայն խաղի-  
անդն ու քեմը, այլև հանդիսատեսների դահլիճը և խաղացող  
դերասանի ու ամբողջ հասարակության փոխադրեցությունը:  
Դերասանը պետք է զգա, վոր յուր վրա հառել ևն հարյուրավոր  
աչքեր, և այն անտեսանելի թելերը, վոր ուղղվում են իրեն հան-  
դիսատեսների դահլիճից: Նա պետք է լսի հավանության և հիաց-  
մունքի արտահայտություններ: Նրա ձգտումն և վիրապը կ  
վոչ միայն այլափոխության խնդումը, այլև հուզել հանդիսա-  
տեսին, ստիպել սրան ծիծաղել կամ լաց լինել, ցնծալ կամ  
վրդովվել:

Մի խոսքով յերեխայի դրամատիկ խաղը միայն խաղ և,  
իսկ դերասաններ՝ խաղատեսարան (Spiel & Schauspiel):

Այս եյական տարրերությունը կամ հաշվի չեն առնում,  
կամ ըստ հարկին չեն գնահատում այն անձերը, վորոնք մերժել  
կամ մերժում են դրամատիկացիան մանկավարժական ահսա-  
կետից, վորոնք յենթագրում են, վոր զոյ յերեխաների մեջ ան-  
խուսափելիորեն կզարդացնի կեղծություն, թատրոնականու-  
թյուն, անափառություն, մեծամտություն, նյարդայնություն և  
այլն: Այդ համաց հայցը տեր մարդիկ մոռանում են, վոր  
դրամատիկացիայով զբաղվող յերեխան բնականորեն կարիք չու-

Նի Հանդիսատեսների, վոչ ել դդալու դերասանի ու Հանդիսատեսի միջ գոյություն ունեցող փոխազգեցությունը, ինչպես կատուն, վորը դրամատիկ խաղ և խաղում յերեակայալ մկան հետ՝ Մնավառությունը, մեծամուռթյունը և այլն հետեանք են շափառաս ղեկավարների ղեպի դպրոցական թատրոնն ունեցած սխալ վերաբերմունքի, իբրև հատուցում նրանց մանկավարժական սխալների, դրանք որդանապես յերբեք չեն կարող կապվել դորժի հյության հետ:

Յերեխաների դրամատիկական խաղի հոգերանական վերլուծությունը ցրում եւ ե մի այլ, զպրոցական թատրոնի հետ հապլված տարակուսանք, այն, վոր բացառական տիպերի, բացառական հերոսների պատկերացումը՝ կարող ե վնասել յերեխայի տակավին անկազմակերպ, յերերուն բարոյական զգացմանը, վոր յերեխան կամ պատանին վերաբառագրելով բնավորության բացառական դժեր, առնելով վրան բարոյապես վատի դիմակը, կարող ե յուր հոգում պահպանել վորեն հետք, չարի վորեն աննորդմարելի դրոշմ, Այդ վախոը բոլորովին անհիմն ե, վորովնետն որամատիպացիան զպրոցական թատրոնում յերեխայի համար մեռմ և խաղ բառի սովորական իմաստով, խաղ, վորը յերեխան շատ լավ տարբերում ե իրականությունից, խաղ, վորտեղ ամեն ինչ չշինելու յեւ, և վոչ իրապես գոյությունն ունեցող:

Յեզ Ստենիկ Հոլլը խորհուրդ ե տալիս ոգտագործել խաղը այդ տեսակետից վորպես միջոց, և պաթուզիական մանկավարժությունը փաստորեն ողափում է խաղից այն դեպքերում, յերբ անհրաժեշտ ե չեղոքացնել, թուլացնել արդեն դոյցություն ունեցող անհրարոյական հակումը, յերբ հարկավոր ե յերեխային միջոց տալ (խաղով) վերացնելու պապերից անցած բնապղը, վորպեսզի հետագայում հոգու ստորին ծալքերը քշված այդ բնապղը ստանա հանցագործությունների սպառնական ձեռք:

Յերեխաների ինքնուրույն դրամատիկ խաղերը նրանց դրամատիկ ստեղծագործության սկզբնական ձեռքն են: Արդեն նախագպրոցական հասակի մանուկների խաղերում մենք նկատում ենք դրամայի այս ու այն տարրը անջատ կամ միքանիւր միասին—մենախոսություն և յերկախոսություն, մարմիշ շարժուձեւը, գրիմ բառիս լայն իմաստով (զգեստավոխություն, զանազան թատերական պարագաներ, ինչպես սուր, աղեղ, մուրացիկի տոպրակ, խոհարարուհու պայուսակ, բեխեր դնելը և հնդիկի զեխ յերեսը նաշխելը և այլն) և թեկուղ շուր տված աթոռների ձևով բեմ, վորոնք ներկայացնում են զնացք,

Տարիքի հետ բարդանում են դրամատիկ խաղերը, հարստանում գործողությունն ու յերկախոսությունը, ավելի բարդանում խաղի պարագաները, ժառանգական և նմանողական խաղերին (վորսորդական, ուզմական, արդյունարերական) միանում և յերեխաներին պատմած հեքյաթների կամ նրանց կարգացած արկածների ներկայացումը (Ծորինզոնից անսարաններ, վայրենիների կյանքից արկածներ), Բավական ուշ յերեխաները սկսում են խաղալ պատրաստի պիեսներ կամ կարգացած հատվածները բեմադրում յուրահատուկ ձևով: Մի խոսքով՝ մանկական դրամատիկ ստեղծագործությունը, վորին ուղղության չի տալիս մնաների միջամտությունը, անցնում և զարգացման վորոշ ուղի, վորի յերակետը (դրամատիկական խաղերը) ավելի կամ պակաս նման և զանազան ժողովրդների թատերական արվեստի պատմական արմատներին: Յերեխայի դրամատենդադործությունըն ական ձևերը չափազանց նմանեն ժողովրդական դրամատիկ խաղերին, սովորություններին և յերգերին, ինչպիսին են, որինակ, ուռւական խմբապարերը, հարսանիկան յերգերը, խաղերգները, ուագերգները, ուագիոնների մայիսյան խաղերը, ձմբան արտաքսումը, հին—ուռւական դվարճանքները (\*ՊՈՏԵԽԻ\*) և ժողովրդական, կենցաղական խաղերը:

Այս հանգամանքը ոգեսք և նկատի ունենան այն անշափավոր թատերասերները, վորոնք հնարազիտություն են համարում դրամատիկական աշխատանքը սկսել բարդ պիեսներով նույնիսկ մանկապարտեզներով, նախադպրոցական տարիքի յերեխաների հետ, ըստ վորում դրանց ներկայացումները հաճախ փայլում են ժամանակակից թատերական տեխնիկայի բոլոր պարագաներով—բնմը յուր առջեկի լապտերաշարքով, խնամքով նկարած դնկորացիաներով, հանդերձեղենով, ամենայն տեսակի բեմական եֆֆեկտներով և դեմքի այնպիսի գրիմով, վորին կարող և նախանձել իսկական դմբասանը: Մանկան հոգերանության ամենատարրական ծանոթությունը կամի, վոր այդ բոլորը—դատարկ բաներ են:

Մանկական ամեն մի տարիք ունի յուր իրավունքները և առանձնահատկությունները, և յեթե խոսենք 8—11 տարեկան յերեխաների մասին, ապա անհրաժեշտ և հաշվի առնել նրանց պարզ հոգերանությունը, վորը պահանջում է հասարակ տեսարան և տարրական ապրումներ և վորը նախապատվություն և տալիս պահումականներին (մարիոնետք) ու խեղկատակացին Պետրուշկաներին, քան պաշտոնական թատրոնների «ման-

կաման ներկայացումներին», վորոնը չափազանց բարդ ու հոգ-  
նեցուցիչ են այդ հասակի յերեխաների մեծամասնության համար։  
Անհրաժեշտ է հաշվի առնել և այն հանգամանքը, վոր այդ  
հասակի յերեխան ազատ դրամատիկ խաղերում յուր վառ յերե-  
մակայությամբ չի ձգտում զեկորացիաների և իրական շրջա-  
պատի, այլ գոհանում և ակնարկներով ու սիմվոլներով—մահճա-  
կալը հեշտությամբ նա դարձնում է նավ, շուռ տված աթոռնե-  
րը՝ վոչխարների հոտ կամ սայլ, Նա խմում է չեղյալ թեյը և խո-  
ժովովում յերեակայական զեղի դառնությունից. միայն 12—14  
տարեկան պատանիներն են, վոր հետզհետեւ զուրս են յենում  
մանկական յերեակայության հմայիչ—տիրապետությունից և  
պահանջում զգուշավոր անցում սիմվոլից անպահույն ռեալիտ-  
յին—զեկորացիային զգեստին. թատերական պարագաներին և  
կահավորման (պարզ բեմադրությամբ)։

Յերեխաների ինքնուրույն դրամատիկ խաղերի մասին բե-  
րած ֆակտերն ու գիտողությունները թույլ են տալիս անել մի-  
շաբաթ կարեսը՝ յեղակացությունները։ Յեթե ընդհանրապես խաղը  
այսքան մեծ տեղ և բանում յերեխաների կյանքում, յեթե ու-  
րիշին մարմացներու ձգտումը յերեխայի բնության հիմնական  
առանձնահատկություններից մեկն ե, ապա ուրեմն պարզ ե,  
վոր դպրոցն ու դաստիարակությունը բրավունք չունին անտար-  
բեր լինելու այդ առանձնահատկության հիմնամամբ, վոչ ել,  
մանկավանդ, մանկան կյանքից ու դաստիարակության ծրագրից  
ջնջելու այն բոլորը, ինչ վոր կազ ունի դրա հետ Ընդհակա-  
ռակը, յերեխայի դրամատիկ բնազդը մանկավարժութեն ուղտագոր-  
ծելը, նրանց դրամատիկական ստեղծագործությանը դպրոցում  
արժանի դիրք տալը—ահա մանկավարժության համար խնդիր-  
ներ՝ հիմնած հոգերանության վրա։

Այս նպատակն ամենից քիչ իրազործել և հին բուրժուական  
այսպիս կռված դպրոցական թատրոնը։ Ընտրելով միքանի  
շընտրյալներ, փորբարանակ յերջանիկներ, բուրժուական դըպ-  
րոցը ներգործուն գերը՝ դերակատարությունը թողնում եր միայն  
այդ յերջանիկներին։ Յերեխաների մեացած ամրող մասամա-  
պեաը և բավականանար և հանդիսատեսիք համեստ վիճակով,  
մասնաված բեմի վրա կատարվող գործողության կրավորապես  
դիմումի դերին։ Բայց ընտրյաների խմբակը, վոր իրավունք եր  
ստացել բեմ յենելու, միաժամանակ չեր ստեղծա-  
գործելու իրավունքը։ Մանկական այդ ներկայացումներին  
զեկավարները մերձնում եյին անշուշտ վոչ մանուկ—մաս-

Նակցողների ստեղծագործության տեսակետից. Նրանց համար՝ ներկայացումը նախ և առաջ մի նաևդես էր. Այդ պատճառով՝ առողջանության, շարժումների, թատերական չխաղի» և զբա արագին ձևերի ուսուցումը փոխարինում եր յերեխաների կենդանի ստեղծագործության՝ Նեկավարի հոգը չեր ստեղծել պայմաններ, վորպեսզի ներկայացման մասնակիցները ինքնուրությաբար վերապրեն իրենց գերերը, յերկան րերեն մանկական՝ ամենատպատ ստեղծագործություն՝ զիմաշարժության, մարմի շարժուձևերի, առողջանության, զգեստավորման ժամանակ, բեմը հարգարելիս, դերերը պարզաբանելիս և այլն։ Նրան հետաքրքրում եր ներկայացման հաջողությունը կամ անհաջողությունը, վորի համար մասնակիցները հանդիսանում երին վորպես նյութ, միջոց։ Ահա այստեղից ե առաջանում մանկական ներկայացումների մեծ մասի կեղծ—թատերական արտաքինը՝ բեմն ամենայն տեսակի տեխնիկական հարմարություններով՝ առջեր մասի լաւագարքով, քաթանե առաջարկով, նատուրալիստական գեկորացիաներով, չափազանց տպավորիչ զգեստավորմամբ, դրիմով և այլն։

Ավելարդ և առել, վոր այդ ներկայացումները վոչ մի կառ չունեին վոչ բովանդակ զպրոցական կյանքի, վոչ նրա առանձին կողմերի և վոչ եւ հենց աշակերտների—իրենց հետաքրքրություն ու պահանջների հետ։

Անտես առնելով յերեխանների շահագրգոռությունները, տուրիցի առանձնահատկությունները և ստեղծագործությունները, հոգ չտանելով ինուրիին՝ մանկավարժորեն մոռենալու, բուրժուական շղործական թատրոնը՝ ծայրանեղ չափով սեղմել, նեղացրել և մանկական դրամատիկական ստեղծագործության անսպաս նյութը։ Ինսելով արդի շափահամների՝ թատրոնին մեքենայօրեն նմանվող՝ նա յուր աշխատանքի համար ոգտագործել և միայն պատրաստի պիհեաները, անուշաղիր թողնելով դրամատիկ խաղերի հսկայական նյութը, դրամատիկ տարրեր ունեցող ժողովրդական և մանկական յերգերը, իմպրովիզացիան \* , դրամատիկա-

\* Իմպրովիզացիա կոչվում ե այն վերաբարությունը, վորի միակ ավալ մեծությանը պիմու նյութն ե, վորը հենց խաղի ընթացքում բոլորովին ազատ կերպով մշակում են դերասանները։ Դրանախիզացիան բարի տեխնիկական, նեղ իմաստով, բացի այսուժեց զերտասներին տալիս ե նայել պիհեսի ընազիրը, վորին նրանք վերաբերվում են ազատորեն, առնդագործելով։ Թեմադրություն ասելով հասկացում ե գրամատիկ տարրեր ունեցող ժողովրդական և մանկական յերգերը, իմպրովիզացիան \*, դրամատիկա-

շիրան և յերեխաներին—իրենց անչափ հետաքրքրական դրամատիկական կոմպոզիցիան:

Ահա թե ինչու արդի մանկավարժական միտքը դպրոցական թատրոնի հին և ներ ըմբռնման փոխարեն մտցնում և նորը, դործի ելությանն ամենի համապատասխանությ և դրամատիկական արգեստի ըմբռնման հետ կազմաձ պատմականորեն ու լեզվաբանութեն, Յեթե դրամատիկական արգեստի հիմնական ելությունը գործողուրիւնն է, այս կամ այն պատկերի կամ սյուժեյի վերաբառագրությունը կենդանի մարդու—անձնավորության (դերասանի) միջացով, ապա ուրիմ դպրոցական դրամատիկացիա առելով պիտք և հասկանալ անձերով արտահայտած վերարտադրուրյան բոլոր տեսակները՝ դրամատիկ խաղերից մինչև խելական գեղարվեստական բեմական գործողությունը մի կողմից և իմպրովիզացիայից մինչև պատրաստի պիեսի խաղը մյուս կողմից:

Այսպիսով, դրամատիկացիա վարոշակի նշանակում և վոչ այն, ինչ վոր սովորաբար կապվում և դպրոցական թատրոնի պատկերացման հետ, այսինքն մանրագննին կերպով պատրաստած ներկայացում բնիմով, դեկորացիաներով, կահավորմամբ, գգեստներով, գրիմով, այլև այն վերաբառագրությունները, վորոնք առաջնառում են առանց կանխամտածման, հանդարտամից, վորոնզ յերեխամանակցողները կարող են ազատորեն առեղծադրությունով արտաքերել ավյալ բնագիրը և վորոնք կատարվում են ամեն մի ուղած տեղում (նստարաններից ազատ դասարանի մի անկյունում, բակում, միջանցքում, անտառի խոտերի վրա և այլն) և բեմական պատրանքին ոժանդակող առանց վորեն արտաքին միջցին (առանց գեկորացիաների, բեմի գգեստների և այլն): Բայց դրամատիկացիայի ըմբռնումից անխուսափելիքորեն զուրս են ձգվում վերաբառագրության մյուս բոլոր տեսակները (ներկի, կավի, յերաժշտության միջոցով և այլն): Նելաբազարդելը, կազմակարելը, յերաժշտական մասը կարող են ուղենից լինել դրամատիկացիային, սակայն դրա ելությունը կազմել—վոչ մի գեղգում:

Դրամատիկացիայի աշխատանքը հսկայական նշանակություն ունի դաստիարակության լայն բնողությանը, մասնավորապես գեղարվեստական դաստիարակությունը մեջ:

Իրեւ գեղագիտական ըմբռնման առանձին տեսակ՝ դրամատիկացիան զարգացնում է գեղգերի թանձրացյալ ձևերի ըմբռնումը, ընդհանրապես կյանքը և իրեն այդ կյանքում թանձրացյալ ձևերի ըմբռնելու կարողությունը—կյանքը գործողություն-

մեջ և զործողությամբ, դրամատիզացիան, վորպես գեղարվեստական ստեղծագործության ու ներգործության տեսակ, նպաստում և առաջացնելու նոր մարդ, ներդրություն կերպով վերապրոց, կյանքում և աշխատանքում յուր չյեսը արտահայտող մարդուն, Դրամատիզացիան դեղարվեստական դաստիարակության ամենալավ դպրոցն ե, վորովնեսե դա որդանապես միացնում և գծադրությունը, ներարշությունը, պլաստիկան, յերաժշտությունը, արտահայտիչ խոսքն ու դրամատիկական արվեստը:

Դաստիարակության մեջ դրամատիզացիայի նշանակությունը չի ստումանափակվոմ միայն դեղարվեստական մոմենտներով, նա յերեխային տալիս և բաղմազան գործնական հմտություններ և ունակություններ, ծանոթացնում նրան շրջապատող աշխարհի տուրքաների հատկություններին ու գործածության։ Ենթական յուր դրամատիկ խաղերի ժամանակ խմում ե, կարում, կոտրում, խմոր անում, հատակն ավելում, ներկում, առեսուր անում և այլն։ Կյանքի առաջին դասերը նա ստանում և նմանողական դրամատիկ խաղերում։

Դրամատիզացիան ստեղծագործարար վարժեցնում և զարդացնում և ամենարազմազան ընդունակություններն ու ֆունկցիաները՝ խոսելը, առօգանությունը, յերեակայությունը, հիշողությունը, զննողականությունը, ուշադրությունը, դադափարշների գուղորդությունները, տեխնիկական ու դեղարվեստական ունակությունները (աշխատանք բեմի վրա, կահավորելիս, պղեստներ, դեկորացիաներ պատրաստելիս), շարժական սիթմ, պլաստիկա և այլն ու դրանց շնորհիվ ընդլայնում յերեխայի ստեղծագործող անձնավորությունը։

Դրամատիզացիան զարգացնում է հույզերը (հմոցիա) և հուզմունքները (եղֆեկտ), այսպիսով հարստացնում ու նրբացնում և անձնավորությունը. զարգացնում համակրանք, կարեկցանք, բարոյական դպացմունք, դաստիարակում և պատկերացնելու ուրիշներին, նրանց կյանքով ապրելու, նրանց ուրախությունն ու վիշտը զդալու ընդունակությունը։

Վորպես դասավանդման մեթոդ դրամատիզացիան յերեխային տալիս և դիմելիքների ներգործուն ըմբռնութեար, վորոնք համապատասխանում են դորձելու ծարավի մանկան բնությանը։

Դրամատիզացիան չոր յուրացման տեղ զնում և կենդանի ու վառ պատկեր, խորը և կենդանի վերապրում։ Միակողմանի աշխատանքի փոխարեն նա դործի յե զնում յերեխայի ամրող անձնավորությունը, միտքը, զգացմունքը, յերեակայությունը,

կամքը—այդ բոլորը մասնակցում են դրամատիկական վերաբերության ստեղծագործական բարդ գործողությունների մեջ:

## II Դրամատիկացիալի նյութը.

Դրամատիկացիալի նյութը պետք է համապատասխանել յերեխաների տարիքին, զարգացման, հետաքրքրության և կառուցնենայ յերեխաներին շրջապատող կյանքի ու ամբողջ դպրոցական աշխատանքի հետ:

Առաջին աստիճանի սկզբի յերեք խմբերի (8—11 տարեկան) յերեխաների համար ամենահարմար նյութեր պետք է համարել ժողովրդական դրամատիկ խաղերը, խմբապարի և այլ յերգերը դրամատիկական տարրերով, մանկական խաղեր, պարզ դրամաներ, վորոնց նյութն և մարդու դանազան աշխատանքները յերգի ուղղեկցությամբ (հունձ, ցանք, յերկաթ կռել—կռփել, փողոցներ մաքրել), յերեխայի սեփական դրսողությունների դիմաշարժական վերաբառադրությունները (ծաղիկներ հավաքել, բույսեր տնկել, աման լվանալ, ջրի վրայով ցատկել), ամբողջ մի եքսկուրսիայի վերաբառադրությունը (Ստենլի Հոլլ և Մանկապարտեզի մանկավարժությունը), յերեխաներին այնքան սիրելի առորյա կյանքի տեսարանները, հանգաւորաստից ներկայացումը (բժիշկ, առեսուր խաղալ և այլն). վերջապես ձանոթ ու սիրած հերյաթների ազատ վերաբառադրությունը (դրամատիկացիա ներիմաստով):

Այդ նյութից հետզհետեւ կարելի յի անցնել բեմադրելու հերյաթներ, ժողովրդական յերգեր, վոտանավորներ, անհատական բանաստեղծություններ, տուակներ և ընդհանրապես պատմողական հարմար նյութեր: Ա. աստիճանի բարձր խմբերը բացի հիշված նյութերից բհմագրում են դրական, ուատմական, աշխարհադրամական, սոցիալական և առորյա բնույթի ունեցող նյութեր, մանկական պատրաստի պիեսներ և վերջապես յերեխաներն իրենց հեղինակած պիեսներն են ներկայացնում: Մանկական դրամատուրգիայի աղքատ բեղիքառուարից անհրաժեշտ և ընտրել այնպիսի պիեսներ, վորոնք հարուստ են գործողությամբ և վորոնք իրենց բովանդակությամբ բավարարում են մանկան հոգուն (պատմական, հերոսական, կննցաղական):

### III. ԴՐԱՄԱՏԻԳԱԳԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՐՈՂԸ.

Դպրոցական դրամատիգացիայի հիմնական մոմենտը—խառնացող յերեխայի անձնավորությունն է, մանկան հոգում ինքնուուրույն դրամատիկական վերապրումների ստեղծումը։ Դեմքի այս ու այն արտահայտության ընտրությունը պետք է թողնվի։ Քացարար մանկան ու պատանու սեփական դրամատիկական ստեղծագործությանն, իրրև հետևանք նրա դրամատիկական պատրանքի ընդունակությանը։ Այսուղից ծաղում և ինքնազգություններության և ստեղծագործության մեթոդը, ինչպես հիմնականում (նյութի ընտրության մեջ և դրամատիկորեն վերաբառադրելին), այնպես և մանրամասներում (բեմի կառուցման ու կահավորման, հարդարման, զգեստների, կարգուսարքի հայթայթման և այլ բաներում)։ Մյուս կողմից անհրաժեշտ է առաջին հերթին առաջ քաշել վոչ թե գործի հետևանքը (ներկայացում, յերեկույթ, սյուժեյի խաղը վերջնական ձևով), այլ հենց աշխատանքի ընթացքը, այն, ինչ վոր առաջ համեստ անունով կոչվում եր «պատրաստվելը»։ Դորդոր անձանց բնույթը, ապրումները բարդ պիեսներում, դրամատիկ վիճակի եյությունն ու նշանակությունը վերլուծելը, բացի դրանից պիեսի ընտրությունը, կենցաղի առանձնահատկությունները, ժամանակի վողին, վոճը վորոշելը և այլն, այդ բոլորը պետք է անի մանկական խմբակն ինքը—դեկաֆարի գերը լինելու յե վոչ թե պիեսի մասին ուսնեցած յուր ըմբռնումը կամ դատողությունը փաթաթելը ուրիշների վզին, այլ միայն ստանձնել մանկական կոլլեկտիվ աշխատանքի ընդհանուր ղեկավարությունը և ոժանդակելը, ցուցմունքներով գլխի զցել միայն անհրաժեշտության դեպքում։ Առչ մի բան չպետք է սովորեցնել—վոչ առաջանության նկատմամբ, վոչ շարժուձևերի, վոչ միզանացենի—դպրոցում տեղ չպետք է ունենա արտիստային «խաղ»։ Անհրաժեշտ է հիշել, վոր վերաբարեղող յերեխայի համար ընականարար դոյցություն ունեն միայն յուր խաղը, յուր վերապրումները, դերակատար դառնալու յուր պատրանքը և վոչ թե հանդիսատեսի վերապրումներն ու պատրանքները։ Աշխատանքի այդպիսի մեթոդը, սակայն, տալիս է անչափ շատ արտաքին հետևանքներ, ամենից ավելի կենդանի գեղարվեստական դեմքեր ստեղծելու իմաստով, քան հին, սովորեցնող մեթոդը (նյու-Յորկի «Դաստիարակիչ» թատրոնի ու-

բինակը): Ամեն մի փորձ աշխատանքի այդ մեթոդով ավելացնում և յերեխաների ներքին ապրումների արտաքին նոր արտահայտությունը, խորացնում ու էատարելազործում և ապրումները և ողոնում ավելի ու ավելի մտնելու դերի մեջ:

Ստեղծագործող մեթոդն ամբողջությամբ իրականանում և իմպրովիդացիայի, դրամատիդացիայի (նեղ իմաստով), բեմառության և յերեխաների՝ իրենց սեփական պիեսների չարահյուսման միջոցով: Այդպիսի սեփական պիեսներ կարող են լինել չափահանների թատրոնի համար զրավածք, բայց պարզ կերպով վերամշակվածները յերեխայի կենցաղի համեմատ, այդպիսի պիեսներ կարող և կազմել մի հատիկ յերեխա կամ մանկական մի ամրող կոլլեկտիվ՝ ֆանտաստիկ, պատմական, աշխարհագրական նյութերից (Ֆինլեյ Զնանոն Շնրամատիդացիան իր ու դասավանդան մեթոդ): Հարկավոր և խրախուսել յերեխաների բանավոր ստեղծագործության մոմենտն ամենուրեք, վորանդ դա տեղին և իմպրովիդացիաններում, դրամատիդացիաններում, անդամ այն դրամատիկ խաղերում, վարժեղ հարկ կա բազմազան դարձնել յերկախոսությունը և ստեղծել նոր վիճակներ: Դրանով համում ենք մենք յերկրորդ նպատակին: յերեխան խորթանում և արտահայտման անկենդանությունից ու քարացած ձևերից և դարդացնում յուր մեջ ապրումների անկեղծություններ:

Համաձայն մանկական խաղերի հետախույզների ցուցմունքների՝ դրամատիդացիայի աշխատանքների առաջին աստիճանը, ինչպես վերեկում հիշվեց, պիտի լինի ուղղակի խաղը դրամատիկ տարրերով, մնայուն բնագրով, ազատ, ստեղծագործական ինքնուրույն ներշնչմամբ: Այնուհետև դրան հաջորդում և զեկավարի պատմածի ազատ վերաբարպությունը և, վերջապես, դրամատիկական վորոշ փորձից հետո միայն բեմադրություն և պատրաստի պիեսների խորագությանը: Հասկանալի յե, այդ աստիճանները կարող են հյուսվել միմյանց, մեկը մտնի մյուսի մեջ, սակայն հաջորդականության ընդհանուր սկզբունքը հենց մնում և այդպիս:


Աշխատանքի մանկավարժական տեսակետից ուղիղ կազմակերպումը պահանջում և, վորպեսզի դրամատիդացիայի աշխատանքում մասնակցեն վոչ թե ընտրյալներն ու տաղանդավորները, այլ, ըստ ուժի և կարողության, նույն տարիքն ունեցող խմբի բօլոր յերեխաները: Պիեսների և նյութերի հավաքական սեժիսյորությունը, պիեսը հավաքական յեղանակով գլուխ բերելը, մասսայական տեսարանները, հավաքական աշխատանքը



բեմը կահավորելիս և այլն—պետք եւ լինի ինչպես համարակական նոր մարդ դաստիարակելու (համարականության սկզբունք), այնպես և նոր արվեստի ծննդյան (համարական արվեստ) մեջու:

Համաձայն յերեխայի ու պատահանությունների, յերեխայի, վորը նախապատվությունն և առլիս պարզին, սկզբնականին և յուր աղատ դրամատիկական իրադի համար չի պահանջում հատուկ դեկորացիաներ ու պարագաներ, վորն ընդունակ է յերեխակայությամբ պատկերացնելու շրջապատող իրականություննը ըստ դրամատիկ խաղի պահանջների, վորը խաղում և յուր և վոչ թե հանդիսատեսների համար —առաջին աստիճանի դպրոցական ներկայացումների հիմնական տիպը պետք և համարել պիննեների պարզ, հասարակ քեմադրությունը (շիրմերով, մահուգով, յետեի դեկորացիայի ֆոնով և այլն, շատ նվազ կամ պայմանական կահավորությամբ, միայն զգեստի, զրիմի և այլ տիպիկ գծերով): Այդպիսի ներկայացումները յերեխային ողնում են ուշադրությունը կենտրոնացնելու հենց գործողության վրա, չտարվելու յերկրորդական պարագաներով ու պաշտպանում հն նրա բնական ձևակը զրսից բերած նատուրալիստական ախտից, վորը խեղաթյուրում և դեռահանեների գեղագիտական զգացման ու դատողության առողջ պարզացումը:


14830



47. Դրամատիկացիան Ա. աստիճանի դպրոցում  
—թարգմ. Ա. Շավարշյանի Գինը — ը. 10 հ.  
48. Ն. Սարգսյան—Դասագիրք Աշխարհագիտու-  
թյան, մասն Գ. Բուսաբանություն > — ը. 25 հ.

**Ցպազրվում յեզ պատրասվում են**

1. Մայրենի լեզու—Ա., Բ., Գ., Դ., Ե. և Զ. աս-  
րիներ:  
1. Եղու՝ Ընդհանուր պատմություն:  
2. Խապակը—Ընդհանուր պատմություն (Հին  
դար) — Թարգմ. Ա. Չիլինկարյանի:  
3. Առ. Լիսիցյան—Աշխարհագրություն:  
4. Ա. Շավարշյան—Թվարանություն (հասակա-  
զորների համար):  
5. Ավանձնա Տեր-Գրիգորյան—Յերաժշտության սար-  
բական թեորիա (ձեռնարկ):  
6. Արգոնավ յեզ Վերաբանիք—Քիմիա. Թարգմ. Հ.  
Ելիբեկյանի:  
7. Տ. Մուշեղյան—Դեպի բնություն (խնդրատեսք):  
8. Մենք Տվյալների մասնակիություն (հանդրատեսք):  
9. Մեն յեզ Տվյալների մասնակիություն Ա. Տոնյանի:  
10. Առողջապահություն (դասագիրք Բ. աս-  
տիճ. դպր. համար), Թարգմ. բժ. Հ. Թա-  
ղեսոյանի:  
11. Պատք. Զալյալու—Մարզու անատոմիան և ֆի-  
զիոլոգիան (դասագիրք Բ. աստիճ. դպրոց-  
ների համար), Թարգմ. բժ. Տ.-Մատթեոսյանի:  
12. Պրոֆ. Պակրովսկի—Տիեզերագրություն (դասագ.  
Բ. աստիճ. դպր. համար):  
13. Մ. Պակրովսկի—Խուսաց պատմությունը ամե-  
նահաղին գծերով, Թարգմ. Լեռ-ի:  
14. Բեմ, Սարուվե, Վոլիս—Հանրահաշիվ. Ա. և Բ. մաս  
Թարգմ. Արշակ Տոնյանի:  
15. Ա. Կիսիյով—Տարրական յերկրաչափություն, թար գմ.  
Արշակ Տոնյանի:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003182

20  
044.

A — II  
23859

(ԳԻՆԸ 10 ԿՈՊ.)